# Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

## Կազմված Սպորտի ոլորտը սահմանող ՀՀ օրենսդրությունից

*Հարց 1*

Ո՞ր օրենքն է կարգավորում և սահմանում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության սկզբունքները, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համակարգի կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը, ինչպես նաև այն սկզբունքները, որոնք պետք է պահպանվեն միջազգային մարզական շարժմանն ինտեգրվելու համար՝

«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 1-ոդ հոդված/

*Հարց 2*

Ի՞նչ է ֆիզիկական կուլտուրան՝

մարդու առողջ ապրելակերպի և ֆիզիկական կատարելագործման համար հասարակության կողմից ստեղծված և օգտագործվող հոգևոր ու նյութական արժեքների ամբողջությունն է.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված, «ա» կետ/

*Հարց 3*

Ի՞նչ հիմնական հասկացությամբ է բնորոշվում բնակչության ֆիզիկական կուլտուրայի մակարդակի բարձրացմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպատակաուղղված պետական և հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիների գործունեությունը.

Ֆիզիկական շարժում.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված, «գ» կետ/

*Հարց 4*

Ի՞նչ է պրոֆեսիոնալ սպորտը.

սպորտի բնագավառում շահույթ հետապնդող գործունեություն, որին մասնակցում են պրոֆեսիոնալ մարզական կազմակերպությունները, սպորտը որպես մասնագիտություն ընտրած մարզիկները.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված, «է» կետ/

*Հարց 5*

Որո՞նք են ֆիզկուլտուրային, մարզական չափորոշիչները.

ֆիզիկական վարժությունների համալիր առաջադրանքներ, որոնց կատարման արդյունքներով բացահայտվում են բնակչության տարբեր տարիքային և առողջական խմբերի ֆիզիկական պատրաստականության մակարդակն ու առողջական վիճակը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված, «թ» կետ/

*Հարց 6*

Ո՞վ է համարվում մարզիչ-մանկավարժ՝

ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում՝ ուսումնական ծրագրով մարզական, մանկավարժական գործունեություն իրականացնող մասնագիտական կրթություն ունեցող անձը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված, «ժա» կետ/

*Հարց 7*

Ո՞վ է համարվում մարզիկ (մարզուհի)՝

որևէ մարզաձևով կանոնավոր զբաղվող և տվյալ մարզաձևից մարզական կարգ ունեցող անձը .

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված, «ժբ» կետ /

*Հարց 8*

Ո՞րն է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության սկզբունքը՝

բնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումն ու երկարակեցության ապահովումը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, «ա» կետ /

*Հարց 9*

Ո՞րն է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության սկզբունքը՝

տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիությունը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, «բ» կետ /

*Հարց 10*

Ո՞րն է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության սկզբունքը`

պետական ծրագրի միջոցով Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ազգային համակարգի կատարելագործումը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, «ե» կետ /

*Հարց 11*

Ո՞րն է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության սկզբունքը`

մարզիկների շրջանում արդար խաղի գաղափարի ամրապնդումը, մրցակցի հանդեպ հարգանքի, ազնիվ վերաբերմունքի ոգով դաստիարակումը, օլիմպիզմի գաղափարների, մարզական էթիկայի կանոնների պահպանումը և սպորտում դոպինգ օգտագործելու, ֆիզիկական և բարոյական կոպտության դեմ պայքարը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, «զ» կետ /

*Հարց 12*

Ո՞րն է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական երաշխիքը`

աջակցությունը ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական և ուսումնական բազաների պահպանմանն ու նպատակային օգտագործմանը, նոր ուսումնամարզական բազաների կառուցմանը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված, «գ» կետ /

*Հարց 13*

Ո՞րն է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական երաշխիքը`

մարզական գործունեության ընթացքում պրոֆեսիոնալ մարզիկների հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում սոցիալական պաշտպանության ապահովումը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված, «ը» կետ /

*Հարց 14*

Ո՞վ է հաստատում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության հայեցակարգը՝

ՀՀ կառավարությունը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված, «ա» կետ /

*Հարց 15*

Ո՞վ է սահմանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական պատվերի տեղադրման կարգը՝

ՀՀ կառավարությունը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված, «գ» կետ /

*Հարց 16*

Ո՞վ է հաստատում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի նորմատիվ ակտերը՝

ՀՀ կառավարությունը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված, «դ» կետ/

*Հարց 17*

Հայաստանի Հանրապետությունում ո՞վ է իրականացնում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի միասնական պետական քաղաքականությունը և զարգացման ռազմավարությունը.

ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմինը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված, «ա» կետ/

*Հարց 18*

Ո՞րն է Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունը.

Համադասում է պետական և տարեկան ծրագրերի մշակման գործընթացը: Մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում այդ ծրագրերով նախատեսված պետական պատվերների տեղադրման կարգը.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված, «բ» կետ /

*Հարց 19*

Ո՞րն է Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունը.

շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, այլ մարզական կազմակերպությունների հետ մշակում և հաստատում է ֆիզկուլտուրային, մարզական չափորոշիչները: Մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի իրավական ակտերը, մասնավորապես զանգվածային սպորտին, բարձրագույն նվաճումների սպորտին և մանկապատանեկան սպորտին առնչվող իրավական ակտերը:

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված, «դ» կետ /

*Հարց 20*

Ու՞մ թույլտվությամբ և պայմաններով կարող են օգտագործվել Հայաստանի օլիմպիական խորհրդանիշները գովազդային կամ այլ նպատակներով՝

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված/

*Հարց 21*

Ո՞վ է իրականացնում ՀՀ հավաքական թիմերի և մարզիկների մասնակցությունն օլիմպիական խաղերին ու Միջազգային օլիմպիական կոմիտեի հովանու ներքո անցկացվող մյուս միջոցառումներին `

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված/

*Հարց 22*

Ո՞վ է Հայաստանի Հանրապետությունում Միջազգային օլիմպիական կոմիտեի խորհրդանիշների, նշանաբանների պահապանը՝

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված/

*Հարց 23*

Ո՞մ կողմից են կազմակերպվում ուսանողական մարզական խաղերը`

մարզաձևերի ազգային ֆեդերացիաների.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված, «ա» կետ/

*Հարց 24*

Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերին և մարզիկներին` աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, համաշխարհային ունիվերսիադաներին և միջազգային մրցաշարերին մասնակցելու համար նախապատրաստում են`

մարզաձևերի ազգային ֆեդերացիաները.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված, «ա» կետ/

*Հարց 25*

Ու՞մ կողմից  են մշակվում և իրականացվում մարզաձևերի զարգացման ծրագրերը.

մարզաձևերի ազգային ֆեդերացիաների կողմից.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված, «ա» կետ/

*Հարց 26*

Ովքե՞ր են համարվում սիրողական մարզիկներ`

այն անձինք, որոնք մրցումներին նախապատրաստվում և մասնակցում են սիրողական սկզբունքով.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված/

*Հարց 27*

Ովքե՞ր են համարվում պրոֆեսիոնալ մարզիկներ.

սպորտը որպես մասնագիտություն ընտրած անձինք, որոնք իրենց մարզական գործունեության համար վարձատրվում են.

/«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված/

*Հարց 28*

Ի՞նչն է մանկապատանեկան սպորտը՝

մինչև 14 տարեկան մանուկների և 14-ից մինչև 18 տարեկան պատանիների մարզական պարապմունքներ.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված/

*Հարց 29*

Որո՞նք են մանկապատանեկան մարզական կազմակերպությունները՝

մանկապատանեկան մարզադպրոցները, մանկապատանեկան մարզական տեխնիկական դպրոցները, օլիմպիական հերթափոխի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցները, օլիմպիական հերթափոխի ուսումնարանները.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված/

*Հարց 30*

Մանկապատանեկան սպորտի մասին օրենսդրությունը բաղկացած է՝

ՀՀ Սահմանադրությունից, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքից, «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերից .

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված/

*Հարց 31*

Մանկապատանեկան սպորտի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունն ապահովում է՝

մանուկների ու պատանիների ֆիզիկական զարգացման և մարզական կրթություն ստանալու հնարավորությունների իրականացումը.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 32*

Որտե՞ղ և ի՞նչ ժամկետում է իրականացվում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի պարտադիր դասավանդումը՝

ուսումնական բոլոր հաստատություններում՝ ուսումնառության ամբողջ ընթացքում.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 33*

Ու՞մ կողմից սահմանված կարգով է իրականացվում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի պարտադիր դասավանդումը՝

ՀՀ կառավարության.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 34*

Ու՞մ սահմանած կարգով է իրականացվում ֆիզիկական արատներ ունեցող կամ հաշմանդամություն ունեցող երեխաների համար առանձին ուսումնամարզական պարապմունքներ՝

ՀՀ կառավարության սահմանած կարգով.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված, 5-րդ մաս/

*Հարց 35*

Ովքե՞ր են կազմակերպում մանուկների ու պատանիների հետ տարվող ուսումնամարզական աշխատանքները՝

մարզիչ-մանկավարժները.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված/

*Հարց 36*

Ի՞նչ կարգով և ովքե՞ր են իրականացնում մարզական միջոցառումների մրցավարությունը՝

համապատասխան մարզաձևերի ազգային ֆեդերացիաների սահմանած կարգով, համապատասխան մասնագիտական որակավորում ու պատրաստվածություն ունեցող մրցավարները.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված/

*Հարց 37*

Ի՞նչ լիազորություն ունի ՀՀ կառավարությունը մանկապատանեկան սպորտի բնագավառում՝

ապահովում է պետական քաղաքականության իրականացումը.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 38*

Ո՞վ է սահմանում ուսումնական հաստատություններում մանուկներին և պատանիներին «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի պարտադիր դասավանդման կարգը՝

ՀՀ կառավարությունը.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված, 4-րդ մաս/

*Հարց 39*

Մանկապատանեկան սպորտի ոլորտում լիազորված մարմինն օրենսդրությամբ սահմանված կարգով ի՞նչ լիազորություն ունի՝

իրականացնում է մանկապատանեկան սպորտի ոլորտի պետական քաղաքականությունը.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 40*

Ո՞վ և ի՞նչ կարգով է իրականացնում մանկապատանեկան սպորտի ոլորտի պետական քաղաքականությունը՝

մանկապատանեկան սպորտի ոլորտում լիազորված մարմինը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 41*

Ո՞վ է մշակում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում հաշմանդամություն ունեցող մանուկների ու պատանիների ընդգրկման ձևերն ու եղանակները՝

մանկապատանեկան սպորտի ոլորտում լիազորված մարմինը.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված, 5-րդ մաս/

*Հարց 42*

Ո՞վ և ի՞նչ կարգով է սահմանում մանուկների և պատանիների համար նախատեսվող ֆիզկուլտուրային-մարզական միջոցառումներին (այդ թվում՝ միջազգային մրցաշարերին) նրանց մասնակցության կարգը ՝

մանկապատանեկան սպորտի ոլորտում լիազորված մարմինը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված, 7-րդ մաս/

*Հարց 43*

Մանկապատանեկան սպորտի ոլորտում ո՞վ է մշակում նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների և ֆիզիկական պատրաստվածության չափորոշիչները՝

լիազորված մարմինը.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված, 8-րդ մաս/

*Հարց 44*

Մանկապատանեկան սպորտի ոլորտում ո՞վ է մշակում մանկապատանեկան սպորտի հարցերի վերաբերյալ մեթոդական փաստաթղթերը՝

լիազորված մարմինը.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված, 11-րդ մաս/

*Հարց 45*

Ո՞վ և ի՞նչ կարգով է կազմակերպում մանկապատանեկան սպորտի բնագավառի մասնագետների /մարզիչների, մանկավարժների և այլն/ պատրաստումը և վերապատրաստումը՝

մանկապատանեկան սպորտի ոլորտում լիազորված մարմինը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված, 13-րդ մաս/

*Հարց 46*

Մանկապատանեկան սպորտի ոլորտում ո՞վ և ի՞նչ կարգով է սահմանում անհատական մարզաձևերում, ինչպես նաև մարզական թիմերի կազմում բարձր ցուցանիշների հասած մանուկներին ու պատանիներին մարզական կարգեր շնորհելու կարգը՝

լիազորված մարմինը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված, 14-րդ մաս/

*Հարց 47*

Մանկապատանեկան սպորտի բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինները՝

աջակցում են համայնքի տարածքում բնակվող մանուկների ու պատանիների մասնակցությանը ֆիզկուլտուրային-մարզական միջոցառումներին.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված, 4-րդ մաս/

*Հարց 48*

Մանուկների ու պատանիների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում միջազգային համագործակցությունը կառուցվում է `

միջկառավարական համաձայնագրերի ու պայմանագրերի հիման վրա.

/«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված, 1-ին մաս/